



42. ԻՍՏԻ ԿՆԵԳՅ ԷԼ Ա ԻՆՈՒՄ

Պարսկաստանէն շահը տոն ա կլամ, վրեր ունան երգիւրը
շոռ կլն, տրեսնա՝ հի՛նչ կա, հի՛նչ չի կա, ունան ընշարքումը
հի՛նչ ա կադարվում: Շորերը փոխում ա, վրեր ճինանչին վուչ:

Շատ ա քլինամ, թա խրեգլ, մին հեռու քաղաք ա հանում:
Մթնում ա: Եշում ա, տրեսնում էտ քաղաքումը լուսերը հինգլըց-
րած, լոխ քոն իւնծ, մենակ մին տրեղ մին լուս ա էրում: Էտ
լոնին թուշավը քլինամ ա, թաքուն եշում, տրեսնում մին ախճիգլ
նստած, մին շտրեսնված զանգլ, կըռուզնոտ շանչիլ տղա լէլ
կլնիւր տիրած տրա գլորգլոնը, քունավ հնցած: Տա քլինամ ա
պերց պոնրոն, տինոն էտ տղեն կլխըտակեն: Վրեր լափ խոր
քունավ ա հընցնում, էտ ախճիգլը կացենը պոնրոն ա, թխում էտ
տղեն կլնիւր կտրոտ, քոն մեշոկը, շիւնկում, տանան տոն ա կլամ,
հըղեն ինոն, քլինամ: Շահն էլ ա հըռաքաշ տրա հետան քլինամ:
Էտ ախճիգլը հըսնում ա մին տոն, տրեղ էլ ըպրելիս ա ինոն
քառասուն ավազակներեն ավազակապետը՝ մին այրեջառ, ունքը-
մաշան մորոն կըթիլիս ազդուն մարթ: Կլնիւր պոնրոն ա տամ
տրան, թա ասածըտ ըրալ ըմ, ես արտեն քունն ըմ: Էտ մարթը
կլխեն եշում ա, եշում, թա՝ ա՛յ տընքանդոն ախճիգլ, ես սրա մին
մազը շնծիմ, տու հունց ռիսկ ըրեր իստի կլխեն յիրա կացեն
քաշիլ: Տընղն ու տրեղը ունան ավազակներեն հրաման ա տամ,

վրեր էտ ըխճըկանը ծխին քմական կապեն, քաշ-քաշ անեն ըս-
պանեն: Տի չէլ անում ըն:

Շահեն սրերտն անանով լըցած, քիինամ ա տոնա կյամ ուրան
պալատը, հրաման տամ, վրեր ուրան երգչիրումը հիշքան կենգյ
կա, տահանց լոխճինին կախ տան, մինն էլլա սաղ թողն վուշ:

էտ վրխտերեն սաղ ըխշարքես թաքավրերենն ուրանց հետե
ուժեղ փանջլըվանենն նոկած, պըհեյիս ըն ինոնմ: Շահեն հորը հարը,
վրեր էլլա շահ ա իլալ, քառասուն ուժեղ փանջլըվան էլ ուրան
հետե յար նոկած ինոնմ պըհեյիս: էտ փանջլըվաններեն մընծը,
վրեր հանած սաղ ա ինոնմ, արտեն պըռսաված, հարոնթութասուն
տրեկան ար: Տա վրեր էտ ըսկանում ա, քիինամ ա շահեն կոշտը
Շահն ուրան թախտան վրեր ա կյամ, շուքըշոք քիինամ տրա ա-
ռաշը, էտ մարթին հըղե տամ բիդի ուրան թախտը: էտ մարթը թա՝
շահն ապրած կենա, ըսկացալ ըմ, վրեր իստի հրաման ըս տովալ,
դե անշուկ կալ, մին պեն նաղլ աննմ: Տա ըսկսում ա նաղլ աննլը:

— Հալա քու պապըտ շահ իլած վախտը վրեր ես ուրան քա-
ռասուն փանջլըվաններեն մընծն ըմ իլալ, իմ երեսունհենգյ փանջլը-
վանենն քիինամ ըն հինշ վրեր մին տընդ, ետ կյամ շըն, շորսն էլ
ըն կընդ-կընդ քիինամ տահանց շոռ կյանլի հետե, էլլա ետ կյամ
շըն: Ես ըմ ինոնմ մնացած: Քշերը քոն իլած, ընշուկավըս մին
սան ա ինգյոնմ: Մինը տոռնը թալում ար: Եր ըմ կենոս, թա
տոնա կյամ, կենգյըս թա՝ խաթան նհախ տընդան կինի, զենքերըտ
եր կալ: Ջենքերըս կապում ըմ, տոնա կյամ, տընսնում մին տղա-
մարթ ծխին յիրան, ինձ թա՝ հետաս եք: Մնամ ըմ զըրմացած: Ես
թա՝ տես-տենն եշումեյ, հետաս եք: Համ քիինամ ըմ, համ վրեն-
նան-կլոխ շափում, քմըկանը տոնա շաշկան տոնա օնում, մեհետ
կըլխավը պըննդ թխում: Տա ծիծաղում ա, թա՝ հանանգյ ընելի
վախտ շըս քըթալ, հետաս եք:

Վըննըծընոքըս տափան կտրում ա: Հետան քիինամ ըմ: Տա
ինձ հացընում ա մին խոր պաղվալ, տանում իմ երեսունինը
փանջլըվաններեն կըլխընեն լոխ նշանց տամ, թա՝ տու վըս իլալ
մնացած, քու կլոխտ էլ պիտի կտրի, մեհենգյ էլ մտըծեցե, վրեր
ոխկ ըս ըրալ ինձ թխալ, քեզ սաղ պիտի թողնմ, հանցու իմ
ըրածներեն վկա ինիս: Ինձ պեց ա թողում, տըռնավը տոնա կյանլիս
քմըկվրեր եշում ըմ, տընսնում տա կըլխան մին պեն եր կալավ,
վրեր օղում ա, թա սընգողումը տինի, ծամերը մինչև մաշկը կախ
իլավ: Բոնդան կլխու վըմ ինգյոնմ, վրեր տա կենգյ ա: Ռիսկըս
մժանում ա, շաշկաս զըրուրան տոնա ըմ օնում, վրեր քիինամ

տրա նհետ կռե փրոնեմ: Տա թա՝ անդգամ, գլիդացեր հա՛, վրեր
կնեգյ ըմ: Դե վրեր տի ոխակալ մարթ ըս, հս քու կնեգյըտ պիտի
տրեռնամ: Տի յէլ անում ա: Տա հնլն սաղ ա, միւնչե մեհենգյ էլ
ինձ նհետ ապրում ա: Մեհենգյ շահն ապրած կենա, ըխշարքումըս
տի կնանեքյ էլ կան, վրեր քու էտ հրամանըտ գլիդան: քեզ սաղ
թողել շըն կենաս: Ես իմ ըսելիսն ըսեցե, էտքանան ետը տու վըս
գլնդում:

Շահը մնամ ա պերանը պեց: Նորից հրաման ա տամ, վրեր
նիրան տված հրամանը ետ յոր օնեն:

